Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՌԵԿՏՈՐ

Թիվ 1206-Լ **«15» «ապրիլի» 2022թ.**

ՀՐԱՄԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 54-րդ կետով և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 3-րդ բաժնի 7-րդ կետի 1-ին մասի «ա» և «բ» ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Համալսարանի 2022 թվականի կարիքների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման առանձին տեսակների համար սահմանել հետևյալ պատասխանատու ստորաբաժանումները.

Համակարգչային, պատճենահանման և օժանդակ տեխնիկայի գնման համար	-	ՀՊՄՀ ՏՏ կենտրոն
Գրենական պիտույքների համար	-	ՀՊՄՀ ՆՏՄ և գնումների համակարգման կենտրոն
Տպագրական աշխատանքների գնման համար	-	ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական գործընթացների կառավարման բաժին
Շինարարական աշխատանքների, ծառայությունների, Վերելակի, գազասարքի սպասարկման, տնտեսական ապրանքների, էլեկտրական սարքավորումների, շինանյութերի, կահույքի և այլ գույքի, նյութերի, հանդերձանքի գնման համար	-	ՀՊՄՀ տնտեսական վարչություն

Տրանսպորտային միջոցների ընթացիկ սպասարկման (ներառյալ վառելիքի և նորոգման ծախսեր) ծառայությունների գնման համար	-	ՀՊՄՀ տնտեսական վարչության տրանսպորտի բաժին
Աուդիտորական և խորհրդատվական ծառայության, ՀԾ ծրագրի սպասարկման գնման համար	-	ՀՊՄՀ հաշվապահություն
Գովազդային, մարքեթինգային ծառայությունների գնման համար	-	ՀՊՄՀ լրատվության և հանրության հետ կապերի վարչություն
Աղավնաձորի ուսումնական բազայի վերականգնման համար ապրանքների, ծառայությունների գնման համար	-	Աղավնաձորի ուսումնական բազա

2. Պատասխանատու ստորաբաժանմանը՝ ստորաբաժանման գործունեությունը կազմակերպել Գնումների մասին ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

ՌԵԿՏՈՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ